

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**2022-2024**

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ**

**ԵՎ 2022**

**ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

## 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Կոռուպցիայի կանխարգելումը հանդիսանում է ՀՀ Կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության գերակա ոլորտներից մեկը, և իր ամրագրումն է ստացել ներպետական քաղաքականության փաստաթղթերում, ինչպես նաև միջազգային հարաբերություններից ստանձնած մի շարք պարտավորություններում: Այսպես՝ 2019 թվականի հոկտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության Կառավարություն N 1332-Ն որոշմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը եվ դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը, որտեղ կոռուպցիայի կանխարգելման նպատակով համապատասխան ինստիտուցիոնալ համակարգի կայացումը դիտարկվում է կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական հենասյուներից և առանցքներից մեկը: Կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջազգային պարտավորությունների տեսանկյունից ՀՀ Կառավարությունը պարտավորություններ է ստանձնել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրում, Եվրոպական հարևանության քաղաքականության (այսուհետ նաև՝ ԵՀԲ) շրջանակներում, Եվրոպական միության ու Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած 2006 թ. գործողությունների ծրագրում, Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2015-2018թթ, և 2019-2022 թթ. գործողությունների ծրագրում և այլն:

2019 թվականի նոյեմբերի 19-ին՝ ի կատարումն կոռուպցիայի կանխարգելման քաղաքականության, ձևավորվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), որին վերապահվել են ընդլայնված լիազորություններ: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 2019 թվականի նոյեմբերի 19-ի դրությամբ գործող խմբագրությամբ նախկին՝ Բարձաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի համեմատությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորությունները գրեթե երկու անգամ մեծացել են: Հանձնաժողովի գործունեությունն աճել է ոչ միայն քանակական առումով, այլ նաև որակական տեսանկյունից գործունեության ծավալը մեծացել է շուրջ երեք անգամ, գործառույթների իրականացման որակական ասպեկտներն արմատապես փոփոխվել են: Նախկին երկու վարչությունների փոխարեն Հանձնաժողովը ձևավորել է վեց վարչություն՝ 1) հայտարարագրերի վերլուծության վարչություն, 2) վարույթների և իրավական ապահովման վարչություն, 3) անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, էթիկայի

կանոնների, բարեվարքության և շահերի բախման վարչություն, 4) կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչություն, 5) մեթոդական աջակցության վարչություն, 6) բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչություն:

Ընդլայնված գործառույթներին համապատասխան՝ խիստ կարևորվել է կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ մարմնի արդյունավետ գործունեությունը՝ ինստիտուցիոնալ (համապատասխան օրենսդրություն) և գործառույթային անկախության, անհրաժեշտ ֆինանսական և նյութական ռեսուրսների ապահովման միջոցով: ՀՀ Կառավարության 10 սեպտեմբերի 2020 թվականի N 1500 - Ա որոշման համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 2019 թվականի նոյեմբերի 19-ի դրությամբ գործող խմբագրությամբ լիազորությունների արդյունավետ իրականացման համար սահմանվել է 40 անձից բաղկացած անձնակազմ, որից մասնագիտական գործառույթային պարտավորությունների իրականացման համար վեց վարչությունների միջև բաշխվել է 21 հաստիք (Անձնակազմի քառասուն հաստիքից նվազեցվում են աջակցող գործառույթ իրականացնող մի շարք հաստիքներ, մասնավորապես՝ Հանձնաժողովի հինգ անդամ, Հանձնաժողովի նախագահի և անդամների 6 օգնական, որոնցից մեկը մամուլի գծով պատասխանատու, գլխավոր քարտուղար, գլխավոր քարտուղարի օգնական, սպասարկող անձնակազմի վեց հաստիք, այդ թվում մարդկային ռեսուրսների կառավարման գլխավոր մասնագետ, գլխավոր հաշվապահ, փաստաթղթաշրջանառության մասնագետ և այլն):

2020 թվականի մարտի 25-ի Կոռուպցիայի կանխարգելման մասին ՀՀ օրենքի, Դատական օրենսգիրք ՀՀ Սահմանադրական օրենքի, դատախազության մասին ՀՀ օրենքի, Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի և մի շարք այլ օրենքների փոփոխություններով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առկա գործառույթներին ավելացել են ևս չորսը (տես «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-8 կետերը), մեծացել է նաև գործունեության ծավալը՝ ավելացել է Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանված հայտարարատուների թիվը նախկին 3200-ի փոխարեն դառնալով մոտ 5500 (Օրենքով հայտարարտու են դարձել դատավորի օգնականները, բոլոր համայնքների ղեկավարներն ու նրանց տեղակալները), հայտարարագրման ենթակա տվյալների ցանկը ընդլայնվել է, ներառելով նաև շահերի հայտարարագիրը, ինչպես նաև զգալիորեն ընդլայնելով գույքի հայտարարագրի բովանդակությունը: Ըստ ներկայումս շրջանառվող Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի փոփոխության նախագծի 2021 թվականից նախատեսվում է էլ ավելի

ընդլայնել հայտարարագրերի բովանդակությունը, ինչպես նաև հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը՝ ներառելով 15,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամներին և նրանց ընտանիքի կազմը: Հայտարարագրերի բովանդակության տեսանկյունից նախատեսվում է ներդնել ծախսերի հայտարարագրումը, ինչպես նաև գույքի փաստացի տնօրինման հայտարարագրումը: Հայտարարագրերի վերլուծության համար Հանձնաժողովը հասանելիություն է ստացել և օգտագործում է նաև բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության շրջանակներում Հանձնաժողովը հայտարարագրման ենթակա գործարքի կողմ հանդիսացող անձանցից կամ հայտարարատուի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիրությամբ կապված անձանցին պահանջում և ստանում է իրավիճակային հայտարարագրեր և վերլուծում է դրանք: Հանձնաժողովը պարտավորվել է իրականացնել ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի, ՀՀ Սահմանդրական դատարանի դատավորների, գործող դատավորների, նրանց հետ համատեղ բնակվող և ընտանիքի անդամ հանդիսացող անձանց 2011-2019 թվականների հայտարարագրերը, որոնց թիվը մոտ է 5500-ին: Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ Հանձնաժողովն իրականացնում է նաև պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն, որը ներառում է գույքի, եկամուտների և շահերի ուսումնասիրություն, ինչպես նաև երեք այլ ոլորտներով խորքային ուսումնասիրություն: Այսինքն՝ 2019 թվականի համեմատությամբ Հանձնաժողովի գործունեության քանակական և որակական ծավալները գրեթե երեք անգամ ընդլայնվել են: Աշխատանքի ծավալի նման ընդլայնվածության հետևանքով Հանձնաժողովի ֆինանսական ռեսուրսների և աշխատակազմի հաստիքների քանակի կարիքները 2021 թվականի համար ևս համամասնորեն աճել են:

2020 թվականին Հանձնաժողովն օբյեկտիվ դժվարություններ է ունեցել անձնակազմի ձևավորման հարցում, մասնավորապես՝ անհրաժեշտ է եղել իրականացնել մի շարք իրավական ակտերի փոփոխություններ, որպեսզի ապահովվի «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն անձնակազմի ներգրավումը, այդ թվում ձևավորել բոլոր անհրաժեշտ կառուցակարգերը և փաստաթղթերը՝ հաստիքացուցակ, պաշտոնի անվանացանկ, պաշտոնի անձնագրեր, յուրաքանչյուր վարչության կանոնադրություն: Պայմանավորված նման աշխատանքի ծավալով և հիմնական գործառույթային մասնագիտական պարտավորությունների իրականացումը համատեղելու հանգամանքով, Հանձնաժողովի կողմից աշխատակազմի ձևավորման աշխատանքները հետաձգվել են: Ինստիտուցիոնալ կայացման, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների համաձայն գործառույթային մասնագիտական պարտավորությունների արդյունավետ և անխափան

իրականացումն ապահովելու համար Հանձնաժողովն արդյունավետորեն համագործակցել և համագործակցում է միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ ԱՄՆ ՄՁԳ, ԵՄ, ԵԽ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հետ: Այս համագործակցության շրջանակներում 2020 թվականի գործունեության իրականացման հետ կապված ծախսերը, այդ թվում անձնակազմի ներգրավում, կապիտալ ծախսեր՝ վերանարոգման աշխատանքներ, գույքի ձեռքբերում, իրականացվել են միջազգային դոնորների օժանդակությամբ:

Միջազգային դոնորների հետ համաձայնեցված և պարզեցված ընթացակարգերի գործադրմամբ Հանձնաժողովը հնարավորություն է ունեցել անձնակազմի բացը լրացնել դոնորների ֆինանսական միջոցներով ներգրավված փորձագիտական ներուժի միջոցով: Մասնավորապես՝ 2020 թվականի ընթացքում միջազգային դոնորների օժանդակությամբ Հանձնաժողովը վարձել և մինչ օրս (2020 թվականի օգոստոս) աշխատում է 21 փորձագետների հետ (ԵԽ երկու միջազգային և երկու տեղական փորձագետ, ԵՄ երկու միջազգային փորձագետ, ԱՄՆ ՄՁԳ վեց միջազգային և 9 տեղական փորձագետ):

Փորձագիտական նման աջակցությունը 2020 թվականի ութ ամիսների համար կազմել է շուրջ 450 հազ ԱՄՆ դոլար: Դոնոր աջակցության շրջանակներում Հանձնաժողովի համար ձեռք է բերվել մոտ 190 հազ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ շարժական գույք, Հանձնաժողովի վարչական շենքում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ շուրջ 10 հազ ԱՄՆ դոլար արժողությամբ: Ընդհանուր 2020 թվականի Հանձնաժողովի գործունեության դոնոր աջակցության ֆինանսական արժեքը կազմել է մոտ 670 հազ ԱՄՆ դոլար, և նույն չափով տնտեսվել է Հանձնաժողովի գործունեության համար պետական բյուջեի միջոցներից:

Նման դոնոր աջակցությունը, սակայն, միտված է եղել առկա մարդկային ռեսուրսների ճգնաժամի և Հանձնաժողովի այլ կարիքների հակազդմանը, այն ամբողջ ծավալով շարունակելի չէ: Հանձնաժողովի կայուն և արդյունավետ գործունեությունն ապահովելու համար արդեն մշակվել և ապահովվել են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն անձնակազմի ներգրավման համար անհրաժեշտ բոլոր հիմքերը՝ իրավական փաստաթղթերը, ինչպես նաև մրցութային կարգով մեկնարկել են անձնակազմի ներգրավման աշխատանքները: 2021 թվականի համար Հանձնաժողովն ակնկալում է ընդլայնված գործունեությանն ու դրա որակական պահանջներին համարժեք պետական ֆինանսական աջակցություն ստանալ:

2020 թվականի համար Հանձնաժողովը, որպես նոր ձևավորված մարմին, գործունեության մեջ կարևորել է ինստիտուցիոնալ կայացումը, այն է՝ Հանձնաժողովի գործունեության երկարաժամկետ ռազմավարության մշակումը, գործունեության նպատակների, խնդիրների և իրականացման ծրագրի սահմանումը, կառավարաման ներքին ընթացակարգերի և կանոնակարգումների սահմանումը, հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության մշակումը, բարեվարքության ուսումնասիրության մեթոդաբանության մշակումը, շահերի բախման, անհամատեղելիության հայեցակարգերի սահմանումը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակումը, հանրային ծառայողների և պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների մշակումը և այլն: Զուգահեռաբար, իրականացվել են նաև օրենքից բխող գործառույթային մասնագիտական պարտավորություններ՝ հայտարարագրերի վերլուծություն, բարեվարքության ստուգում և այլն: 2020 թվականին Հանձնաժողովի կողմից հարուցված պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության, հայտարարագրման ենթակա տվյալներն անզգուշությամբ չլրացնելու, հայտարարագրման ենթակա գործարքների օրինականության հիմքով հարուցված վարույթներն անհրաժեշտ է չափել ոչ միայն քանակական, այլ որակական ցուցիչով, քանի որ Հանձնաժողովը թիրախավորել է կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են շահերի բախումը, անհամատեղելիությունը, գույքի, եկամուտների օրինականությունը: Այս հիմքերով հարուցված վարույթները նախադեպային նշանակություն ունեն և հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի և կոռուպցիայի տարածմանը նպաստող գործոնների ընկալման վարքագծային և մշակութային փոփոխության համար:

2020 թվականի ընթացքում, ելնելով հայտարարագրերի վերլուծության արդյունավետությունն ու օգտակարությունը մեծացնելու անհրաժեշտությունից, Հանձնաժողովը մշակել է ամբողջությամբ ավտոմատացված, արհեստական բանականության հիմքով ռիսկային ցուցիչների վերլուծություններ իրականացնող էլեկտրոնային համակարգի նախագիծ, որը օբյեկտիվորեն հավակնում է կոռուպցիայի դեմ պայքարում թվային տեխնոլոգիաների ներդրման լավագույն փորձերից մեկը հանդիսանալ: Այն ներառում է ոչ միայն հայտարարագրերի վերլուծության, այլ նաև բարեվարքության գնահատման բաղադրիչները, հայտարարատուների կողմից համակարգի օգտագործման և հանրային մատչելիության ապահովման արդյունավետ գործիքներ: Համակարգի տեխնիկական առաջադրանքի նախագծի իրականացման համար ֆինանսական աջակցություն է նախատեսվում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստան. Պետական հատվածի

արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում «Կոռուպցիայի դեմ պայքարի և արդարադատության» բաժնի ներքո, ինչպես նաև ՀՀ Կառավարության, այլ դոնոր աջակցության միջոցներով:

## **2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ**

2021 թվականին Հանձնաժողովը նախատեսում է գործունեության թե քանակական, թե որակական ցուցիչներով ընդլայնում:

2021 թվականի համար Հանձնաժողովի գործունեության հիմնական նպատակն է *ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համակարգային և անհատական գործուն մեխանիզմների ներդրումն ու արդյունավետ շահագործումը*: Այս նպատակի համար Հանձնաժողովի գործունեության թիրախներն են.

*Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նախատեսում է հետևյալ նոր ծրագրային միջոցառումների իրականացումը.*

### **1. Բարձրացնել հայտարարագրերի վերլուծության և հնարավոր խախտումների հայտնաբերման մեխանիզմների արդյունավետությունը.**

- 1.1 հայտարարագրերի վերլուծության ռիսկային ցուցիչների վրա հիմնված մեթոդաբանության մշակում,
- 1.2 ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության միջոցով հայտարարագրերի ընդհանուր թվի 30%-ի համալիր վերլուծություն,
- 1.3 ավտոմատացված հաշվետվությունների և ռիսկերի դուրս բերման էլեկտրոնային համակարգի մշակում և գործարկում:

### **2. Նվազեցնել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման, անհամատեղելիության, վարքագծի կանոնների խախտումները.**

- 2.1 Մշակվել է շահերի բախման այնպիսի հայեցակարգ, որն արտահայտում է իրական կյանքում դրսևորվող հովանավորչության, ընտրողական մոտեցումների, որոշումների կայացման միջոցով արտոնություններ ձեռք բերելու և այլ դրսևորումները, ինչպես նաև հիմնված է միջազգային չափորոշիչների և լավագույն փորձի վրա,
- 2.2 Մշակվել է շահերի բախման օրենսդրական փոփոխությունների նախագիծ/առաջարկ,

- 2.3 Մշակվել է շահերի բախման իրավիճակի կառավարման ուղեցույց,
- 2.4 Շահերի բախման կառավարման ուղեցույցը ներկայացվել և ներդրված է առնվազն չորս նախարարությունում,
- 2.5 Մշակվել է շահերի բախման մոնիթորինգի պլան,
- 2.6 Շահերի բախման մոնիթորինգի արդյունքների հիման վրա ներկայացվել են խորհրդատվական բնույթի վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ (առնվազն 10),
- 2.7 Մշակվել է անհամատեղելիության այնպիսի հայեցակարգ, որը հնարավորություն է տալիս կանխել իշխանություն-բիզնես սերտաճումը,
- 2.8 Մշակվել է վարքագծի կանոնագրքի կիրառման ուղեցույց,
- 2.9 Ներդրվել է վարքագծի կանոնների կիրառման մոնիթորինգի մեխանիզմ,
- 2.10 Իրականացվել է վարքագծի կանոնագրքի կիրառման պրակտիկ խորհրդատվություն (առնվազն 5 նախարարություններում):

**3. Ընդլայնել և կատարելագործել պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության օրենսդրական և գործնական հնարավորությունները.**

- 3.1 Իրականացվել է բարեվարքության ստուգման տարբեր երկների (առնվազն 5 երկիր) փորձի ուսումնասիրություն,
- 3.2 մշակվել է Հայաստանում բարեվարքության ստուգման գործընթացի բարելավման առաջարկությունների փաթեթ,
- 3.3 մշակվել է պետական կառավարման այլ ոլորտներում (առնվազն երեք ոլորտում) պաշտոնի նշանակման ենթակա անձնաց բարեվարքության ստուգման առաջարկ և հիմնավորում,
- 3.4 կազմակերպվել է մշակված առաջարկությունների շուրջ առնվազն երեք հանրային քննարկում,
- 3.5 արդյունավետորեն իրականացվել է գործող օրենսդրական կարգավորումներով պետական պաշտոններում նշանակման ենթակա թեկնածուների բարեվարքության ստուգում,
- 3.6 բարելավվել է բարեվարքության գնահատման մեթոդաբանությունը՝ ընդլայնելով գնահատման ենթակա տարրերը և բաղադրիչները:



**4. Աջակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրանց արդյունքների հիման վրա կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման գործողությունների ծրագրեր մշակմանը.**

4.1 Մշակել և հաստատման ներկայացնել պետական կառավարման մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանություն

4.2 Ապահովել մեթոդաբանության շուրջ միջգերատեսչական և հանրային քննարկումներ,

4.3 Մշակել կոռուպցիոն ռիսկերի գնահատման պլանը, ներառյալ իրականացման ժամանակացույցը,

4.4 Վերահսկել պետական կառավարման մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման իրականացումը,

4.5 Օժանդակել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնահատման արդյունքների ամփոփմանը,

4.6 Կազմակերպել միջգերատեսչական և հանրային քննարկումներ կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքների շուրջ

4.7 Օժանդակել կոռուպցիոն ռիսկերի արդյունքների հիման վրա համապատասխան գործողությունների ծրագրերի մշակմանը,

4.8 Ապահովել գործողությունների ծրագրի իրականացման մոնիթորինգը:

**5. Բարձրացնել կոռուպցիայի կանխարգելման և դրա հիմնական թիրախների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը և ապահովել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված կրթություն ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համակարգում.**

5.1 մշակվել է հանրային իրազեկման երկարաժամկետ ռազմավարություն, որը ներառում է սոցիալական տարբեր խմբերի կարիքներից ու կարողություններից բխող միջոցառումներ և կարող է ապահովել բնակչության առնվազն 60%-ին,

5.2 մշակվել և քաղաքացիական ծառայության խորհրդին է ներկայացվել շահերի բախման, անհամատեղելիության, վարքագծի կանոնների, բարեվարքության վերաբերյալ սեմինարների ծրագրեր (առնվազն 4 ծրագիր)

**6. Խթանել Հանձնաժողովի միջազգային համագործակցությունը և ապահովել Հանձնաժողովի անդամակցությունը կոռուպցիայի կանխարգելման նպատակով գործող միջազգային ցանցերին.**

6.1 Մշակել Հանձնաժողովի միջազգային համագործակցության պլան,

6.2 Դուրս բերել համապատասխան ցանցերի և կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունները, որոնց հետ Հանձնաժողովը կարող է համագործակցել,

6.3 Իրականացնել համագործակցության համար կապերի հաստատման արշավներ՝ ՀՀ-ում գործող օտարերկրյա դեսպանատների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների միջոցով,

6.4 Ապահովել Հանձնաժողովի գործունեության ներկայացումը միջազգային հարթակներում,

Ապահովել միջազգային աջակցությամբ Հանձնաժողովի կողմից կոռուպցիայի կանխարգելման տարբեր ծրագրերի իրականացումը:

**7. Նպաստել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմների արդյունավետ իրագործմանը.**

7.1 Հայտարարագրերի ընդհանրական տվյալների բազայի վերլուծության միջոցով վեր հանել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համար ներկա և նախկին հայտարարատուների թիրախային խմբեր

7.2 Ապահովել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համատեքստում հայտարարագրերի համալիր վերլուծության անխափան և անժամանակավրեպ գործընթաց:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները				Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ	Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ	
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը			
			Ցուցա-նիշը	Ժամ-կետը	Ցուցա-նիշը			Ժամ-կետը
<p>Ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համակարգային անհատական գործուն մեխանիզմների ներդրումն արդյունավետ շահագործումը</p>	<p>1181 Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելման խթանում</p>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական կառավարման համակարգում բարելավության համակարգի ներդրում,</li> </ul>	0	2021	1	2022	<p>2019 թվականի հոկտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության Կառավարություն N 1332-Ն որոշմամբ սահմանված գործողությունների ծրագրի քանակական և որակական թիրախներ</p>	<p>Ծրագիրը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակների և դրանց գծով սահմանված գլոբալ ցուցանիշների հետ, իսկ ավելի կոնկրետ «Խթանել խաղաղ ել ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու ել ներառական հաստատություններ» Նպատակ 16-ի 16.5 կետի հետ «Էապես</p>

						կրճատել կոռուպցիան և կաշառակերությունը իրենց բոլոր ձևերով»
	<ul style="list-style-type: none"> <li>Պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրում</li> </ul>	0	2021	1	2022	
	<ul style="list-style-type: none"> <li>Հայտարարագրերի ռիսկային ցուցիչների վրա հիմնված վերլուծության մեթոդաբանության ն գործարկում</li> </ul>	0	2021	1	2022	
	<ul style="list-style-type: none"> <li>Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի համաձայն պետական պաշտոնի նշանակման ենթակա անձանց բարեվարքության ստուգում</li> </ul>	35	2021	100%	2022	
	<ul style="list-style-type: none"> <li>Հակակոռուպցիոն</li> </ul>	0	2021	3	2022	

	կրթական ծրագրերի ներդրում				
	<ul style="list-style-type: none"> <li>Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման ծրագրի ներդրում</li> </ul>	0	2021	2	2022
	<ul style="list-style-type: none"> <li>Միջազգային համագործակցության ծրագրի ներդրում</li> </ul>	0	2021	1	2022
	<ul style="list-style-type: none"> <li>Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքի հիման վրա հայտարարագրերի վերլուծության իրականացում</li> </ul>	0	2021	100%	2022

**3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ**

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
<ul style="list-style-type: none"> <li>Բարձրացնել հայտարարագրերի վերլուծության և հնարավոր խախտումների հայտնաբերման մեխանիզմների արդյունավետությունը</li> <li>Նվազեցնել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման,</li> </ul>	Թեև հայտարարագրման համակարգը գործել է 2011 թվականից, սակայն արդյունավետ չի եղել և կոռուպցիայի կանխարգելման նպատակին գրեթե չի ծառայել: Անհրաժեշտ է ամբողջությամբ վերագործարկել հայտարարագրման և հայտարարագրերի վերլուծության համակարգը՝ ապահովելով հայտարարագրման ենթակա գործարքների՝ գույք, եկամուտներ, ինչպես նաև շահերի օրինականության ստուգումը և կոռուպցիոն գործարքների հայտնաբերումը:

<p>անհամատեղելիության, վարքագծի կանոնների և այլ սահմանափակումների խախտումները,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ընդլայնել և կատարելագործել պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության օրենսդրական և գործնական հնարավորությունները,</li> <li>• Աջակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրանց արդյունքների հիման վրա կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման գործողությունների ծրագրեր մշակմանը,</li> <li>• Բարձրացնել կոռուպցիայի կանխարգելման և դրա հիմնական թիրախների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը և ապահովել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համակարգում,</li> <li>• Խթանել Հանձնաժողովի միջազգային համագործակցությունը և ապահովել Հանձնաժողովի անդամակցությունը կոռուպցիայի կանխարգեման նպատակով գործող միջազգային ցանցերին,</li> <li>• Նպաստել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմների արդյունավետ իրագործմանը</li> </ul>	<p>Մինչև 2019 թվականը ՀՀ-ում շահերի բախման հայեցակարգը գործուն կառուցակարգեր չի ունեցել և դրանց բացակայությունն է հիմք հանդիսացել մասնավոր բիզնեսի և իշխանության սերտաճման, և այդ հիմքով կոռուպցիոն սխեմաների տարածման համար: Ուստի, խիստ կարևոր և անհրաժեշտ է, որպեսզի ներդրվեն շահերի բախման բացահայտման և կանխարգելման այնպիսի կառուցակարգեր, որոնք կապահովեն մասնավոր բիզնեսի և իշխանության անջատումը, ինչպես նաև այդ հիմքով կոռուպցիոն ռիսկերի չեզոքացումը:</p> <p>Պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության ստուգումը ՀՀ-ում ներդրվել է 2020 թվականից և կարիք ունի շարունակական կատարելագործման, որպեսզի հնարավոր լինի կանխել պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց կողմից հնարավոր անօրինական գործողությունները, այդ թվում քրեական ենթամշակույթին հարող անձանց և խմբավորումների հնարավոր ազդեցության, կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, շահերի բախման իրավիճակներում որոշումներ կայացնելու հավանականությունը:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում շահերի բախման հասկացությունը՝ որպես իրավական նորմ, սահմանված է 2019 թվականին ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում: Չնայած այդ նորմի առկայությանը, շահերի բախման կանխարգելումն արդյունավետորեն չի իրականացվում: Նախ՝ ՀՀ օրենսդրությամբ «շահերի բախում»-ը ենթադրում է արդեն իսկ շահերի բախման փաստացի իրավիճակի առկայություն և դրա արդյունքում պաշտոնյայի կամ նրա փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավում: Այս սահմանումը չի համապատասխանում միջազգային սահմանումներին և չի արտացոլում երևույթի բուն էությունն ու ամբողջական բովանդակությունը, ինչպես նաև չի շեշտադրում հակասությունը հանրային և մասնավոր շահերի միջև:</p>
---	---

--	--

**Հավելված N 12**

**ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՎԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**1. ՈԼՈՐՏԸ**

Հանձնաժողովի գործունեության ոլորտն առնչվում է.

1. ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի N 1332-Ն որոշմամբ սահմանված կոռուպցիայի կանխարգելման քաղաքականությանը՝ ինստիտուցիոնալ համակարգի ներդրման և կայացման առումով,
2. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի կիրառումն ապահովող մեխանիզմների կիրառմանը,
3. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված հայտարարագրման համակարգին, ինչպես նաև
4. «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքով Հանձնաժողովի հետևյալ լիազորությունների իրականացմանը
  - պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների քննություն և որոշումների կայացում,
  - հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործերի քննում,

- պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարում,
- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծություն և դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ իրավասու մարմին,
- կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակում և դրանք ներկայացնում է Կառավարություն,
- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի և իրականացնում միջոցառումների մշակում,
- իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և դրանց իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների մշակում, դրանց վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններ,
- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության ուսումնասիրության իրականացում,
- պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների (կանոնագիրքը) ընդունում,

**2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ**



2022-2024 թվականների համար Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանել է հիմնական յոթ թիրախներ

1. հայտարարագրերի վերլուծության և հնարավոր խախտումների հայտնաբերման մեխանիզմների արդյունավետության բարձրացում,
2. պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման, անհամատեղելիության, վարքագծի կանոնների և այլ սահմանափակումների խախտումների նվազեցում,
3. պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության օրենսդրական և գործնական հնարավորությունների ընդլայնում,
4. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրանց արդյունքների հիման վրա կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման գործողությունների ծրագրեր մշակման համակարգի ներդրում,
5. կոռուպցիայի կանխարգելման և դրա հիմնական թիրախների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացում և կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ապահովում,
6. Հանձնաժողովի միջազգային համագործակցության խթանում
7. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմների արդյունավետ իրագործում (Հանձնաժողովի գործունեությանն առնչվող մասով):

**3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ծախսային ծրագրային գերակայությունները բխում են գործունեության հիմնական նպատակից, այն է՝ *ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համակարգային և անհատական գործուն մեխանիզմների ներդրումն ու արդյունավետ շահագործումը*: Այս համատեքստում Հանձնաժողովը սահմանել է հետևյալ ոլորտային ծախսային ծրագրերը.

1. Բարձրացնել հայտարարագրերի վերլուծության և հնարավոր խախտումների հայտնաբերման մեխանիզմների արդյունավետությունը.
  - 1.1 Ծախսերի հայտարարագրի ձևանմուշի մշակում,
  - 1.2 Հայտարարագրերի վերլուծության, ներառյալ ծախսերի հայտարարագրում, շահերի հայտարարագրում, ռիսկային ցուցիչների վրա հիմնված մեթոդաբանության մշակում և դրա իրագործման էլեկտրոնային համակարգի գործարկում,
  - 1.3 Հայտարարագրերի համալիր վերլուծության իրականացում,
  - 1.4 Հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված խախտումների հիմքով վարույթների իրականացում,
  - 1.5 Հայտարարագրերի ուսումնասիրության եռամսյակային հաշվետվությունների պատրաստում:
  
2. Նվազեցնել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման, անհամատեղելիության, վարքագծի կանոնների խախտումները.
  - 2.1 Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում շահերի բախման, անհամատեղելիության վերաբերյալ միջազգային լավագույն փորձի վրա հիմնված հայեցակարգի տեղայնացում,
  - 2.2 Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում անհամատեղելիության պահանջների, իրավիճակային շահերի բախման կառավարման ուղեցույցների և մեթոդական ձեռնարկների մշակում և ներդրում,
  - 2.3 Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում անհամատեղելիության պահանջների, իրավիճակային շահերի բախման պարբերական ուսումնասիրության իրականացում,
  - 2.4 Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում հայտնաբերված անհամատեղելիության պահանջների խախտման, իրավիճակային շահերի բախման հիմքով վարույթների իրականացում,
  - 2.5 Վարքագծի կանոնների կիրառման ուղեցույցների մշակում,
  - 2.6 Քաղձառայողների պարտադիր վերապատրաստման համար վարքագծի կանոնների առարկայական ծրագրի մշակում և ներդրում,
  - 2.7 Վարքագծի կանոնների արդյունավետ կիրառման նկատմամբ հանրային վերահսկողության մեխանիզմի մշակում և ներդրում:

3. Ընդլայնել և կատարելագործել պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարելավարքության ուսումնասիրության օրենսդրական և գործնական հնարավորությունները.
  - 3.1 մշակել և ներկայացնել միջազգային լավագույն փորձի վրա հիմնված բարելավարքության ուսումնասիրության կատարելագործման օրենսդրական փոփոխությունների նախագիծ,
  - 3.2 կատարելագործել բարելավարքության ուսումնասիրության համար պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից տեղեկությունների ստացման մեխանիզմները, այդ թվում համագործակցության հուշագրերի կնքման, ազդարարների համակարգի կիրառման արդյունավետության մեծացման միջոցով,
  - 3.3 Մեծացնել բարելավարքության եզրակացության ազդեցությունը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց/թեկնածուների վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացում:
4. Աջակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրանց արդյունքների հիման վրա կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման գործողությունների ծրագրեր մշակմանը
  - 4.1 Կազմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման պլաններ (առնվազն չորս մարմնում համաժամանակյա իրականացման համար),
  - 4.2 Իրականացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի փորձնական գնահատում,
  - 4.3 Իրականացված գնահատման հիման վրա կազմել կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման պլան,
  - 4.4 Կազմակերպել միջգերատեսչական և հանրային քննարկումներ կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման պլանների շուրջ:
5. Բարձրացնել կոռուպցիայի կանխարգելման և դրա հիմնական թիրախների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը և ապահովել կոռուպցիոնայի կանխարգելմանն ուղղված կրթություն ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համակարգում,
  - 5.1 Մշակել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում շահերի բախման, անհամատեղելիության պահանջների պահպանման հայեցակարգերի հանրայնացման ծրագրեր,

- 5.2 Ապահովել ՀՀ ամբողջ տարածքում շահերի բախման, անհամատեղելիության պահանջների պահպանման հայեցակարգերի շուրջ հանրային քննարկումները,
- 5.3 Հանրային ծառայողների շրջանում իրականացնել վարքագծի կանոնների շուրջ վերապատրաստումներ,
- 5.4 Մշակել հայտարարագրերի լրացման ուղեցույցեր և իրականացնել հանրային պաշտոնատար անձանց վերապատրաստումներն այս ուղղությամբ,
- 5.5 Մշակել և ներդնել բարձրագույն ուսումնական հաստատություններում կոռուպցիայի կանխարգելման առարկայական ծրագրեր,
- 5.6 Մշակել և ներդնել բարեվարքության, բարեվարքության ուսումնասիրության գործընթացում քաղաքացիների մասնակցության կարևորության վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ:
6. Խթանել Հանձնաժողովի միջազգային համագործակցությունը և ապահովել Հանձնաժողովի անդամակցությունը կոռուպցիայի կանխարգեման նպատակով գործեղ միջազգային ցանցերին
- 6.1 Ուսումնասիրել և հայտնաբերել կոռուպցիայի կանխարգելման միջազգային կազմակերպություններ և ցանցեր,
- 6.2 Մշակել կոռուպցիայի կանխարգելման միջազգային կազմակերպությունների և ցանցերի անդամակցության ծրագրեր, այդ թվում հայտարարագրերի ուսումնասիրության համար անհրաժեշտ տվյալների օտար երկրներում առկա տեղեկատվական բազաներից ստացման մեխանիզմներ,
- 6.3 Կազմակերպել միջազգային կազմակերպությունների հետ միջազգային և տարածաշրջանային համաժողովներ:
7. Նպաստել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմների արդյունավետ իրագործմանը:
- 7.1 Հայտարարագրերի ընդհանրական տվյալների բազայի վերլուծության միջոցով վեր հանել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համար ներկա և նախկին հայտարարատուների թիրախային խմբեր
- 7.2 Ապահովել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համատեքստում հայտարարագրերի համալիր վերլուծության անխափան և անժամանակավրեպ գործընթաց:

Ծրագրային դասիչը	Ծրագիր / Միջոցառում	2022թ բյուջե (հազ. դրամ)	2023թ բյուջե (հազ. դրամ)	2024 թ բյուջե (հազ. դրամ)
1181	<b>Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելման խթանում</b>	<b>582940.3</b>	<b>738750.9</b>	<b>724879.3</b>
11001	Ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համակարգային և անհատական գործուն մեխանիզմների ներդրումն ու արդյունավետ շահագործումը	426677.3	578271.9	597829.3
11002	Բարձրացնել հայտարարագրերի վերլուծության և հնարավոր խախտումների հայտնաբերման մեխանիզմների արդյունավետությունը	34750	34750	34750
11003	Նվազեցնել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման, անհամատեղելիության, վարքագծի կանոնների խախտումները	20080	20080	20080
11004	Ընդլայնել և կատարելագործել պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության օրենսդրական և գործնական հնարավորությունները	4000	4000	4000
11005	Աջակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատում և դրանց արդյունքների հիման վրա մշակել կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման գործողությունների ծրագրեր	10080	10080	10080
11006	Բարձրացնել կոռուպցիայի կանխարգելման և դրա հիմնական թիրախների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը և ապահովել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված կրթություն ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համակարգում	40300	40300	40300
11007	Խթանել Հանձնաժողովի միջազգային համագործակցությունը և ապահովել Հանձնաժողովի անդամակցությունը կոռուպցիայի կանխարգեման նպատակով գործել միջազգային ցանցերին	9200	9200	9200
11008	Նպաստել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմների արդյունավետ իրագործմանը	8640	8640	8640
31001	Հանձնաժողովի կարողությունների զարգացում	29213	33429	0

## 4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իրականացնում է 11001 «Ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համակարգային և անհատական գործուն մեխանիզմների ներդրումն ու արդյունավետ շահագործումը» միջոցառումը, որը իրենից ներկայացնում է Հանձնաժողովի պահպանման ծախսերը և հանդիսանում է գոյություն ունեցող պարտավորություն:

#### 1) **Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ:**

Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իրականացնում է.

1. Բարձրացնել հայտարարագրերի վերլուծության և հնարավոր խախտումների հայտնաբերման մեխանիզմների արդյունավետությունը,
2. Նվազեցնել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման, անհամատեղելիության, վարքագծի կանոնների խախտումները,
3. Ընդլայնել և կատարելագործել պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության օրենսդրական և գործնական հնարավորությունները,
4. Իրականացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատում և դրանց արդյունքների հիման վրա մշակել կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման գործողությունների ծրագրեր,
5. Բարձրացնել կոռուպցիայի կանխարգելման և դրա հիմնական թիրախների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը և ապահովել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված կրթություն ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համակարգում,
6. Խթանել Հանձնաժողովի միջազգային համագործակցությունը և ապահովել Հանձնաժողովի անդամակցությունը կոռուպցիայի կանխարգեման նպատակով գործել միջազգային ցանցերին,

7. Նպաստել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմների արդյունավետ իրագործմանը, միջոցառումները, որը իրենից ներկայացնում է Հանձնաժողովի պահպանման ծախսերը և հանդիսանում է գոյություն ունեցող պարտավորություն:

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
<p>Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ Ընդհանուր ծրագրային ոլորտները և դրանց ներքո նախատեսված գործողությունները բխում են 2003 թվականի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի ՄԱԿ-ի կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից, ինչպես նաև 2019 թվականի հոկտեմբերին ՀՀ կառավարության կողմից հաստատված հակակառուպցիոն ռազմավարությունից, ինչպես նաև Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքով Հանձնաժողովի համար սահմանված լիազորությունները:</p>					

1181	11002	<p>Բարձրացնել վերլուծության խախտումների մեխանիզմների հայտարարագրերի և հնարավոր հայտնաբերման արդյունավետությունը</p>		<p>Բացակայում է</p>	<p>Թեև 2017 թվականի հունիսի 9-ի Հանրային ծառայության մասին ՀՕ-98-Ն4 օրենքի փոփոխությունների համաձայն՝ օրենքի 43,1 հոդվածով նախկինում գործող Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը պետք է մշակեր հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանություն, սակայն մեթոդաբանությունը չի մշակվել և մեթոդաբանության վրա հիմնված հայտարարագրերի վերլուծություն Հայաստանում չի իրականացվել: Արդյունքում պետական պաշտոնատար անձնաց գույքի, եկամուտների առնչությամբ տեղի ունեցած խախտումներն ու բացթողումները չեն արձանագրվել, և հիմք է հանդիսացվել պաշտոնատար անձանց անպատժելիության և կոռուպցիայի տարածման համար:</p> <p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովը մշակում է հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությունը և ռիսկային չափորոշիչները: Ենթադրվում է, որ հայտարարագրերի վերլուծությունն իրականացվելու է այդ մեթոդաբանության և ռիսկային չափորոշիչների հիման վրա: Այս առումով Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ և առկա է հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության նախագիծ: Բացի այդ, մշակվել է հայտարարագրերի էլեկտրոնային համակարգ, որտեղ վերծրությունն իրականացվելու է ավտոմատացված կարգով՝ ռիսկային չափորոշիչների հիման վրա:</p> <p>Այս պահին Հանձնաժողովը ակտիվ աշխատանքներ է տանում մշակված մեթոդաբանության և ռիսկային ցուցիչների կիրառելիությունն ապահովելու համար:</p>
------	-------	---	--	---------------------	--



	11003	<p>Նվազեցնել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման, անհամատեղելիության, վարքագծի կանոնների խախտումները</p>		<p>Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման համար կարևորագույն նախապայման է դիտարկվում պաշտոնատար անձանց վարքագծի կանոնադրերի մշակումն ու դրանց արդյունավետ կիրառելիության ապահովումը:</p> <p>Վարքագծի կանոնադրի հիմնական նպատակն է հարախուսել պաշտոնատար անձանց շրջանում անկաշառությունը, ազնվությունը և պատասխանատվությունը:</p> <p>Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայողների վարքագծի կանոնների մշակումը հանդիսանում է Հանձնաժողովի լիազորություններից մեկը: Ի հավելումն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովը պարտավորվում է ապահովել վարքագծի կանոնների կիրառումը և կանոնների կիրառման մշտադիտարկումը:</p> <p>Այս տեսանկյունից Հանձնաժողովը մշակել է վարքագծի կանոնադրերը և լայնածավալ աշխատանքներ է նախատեսում վարքագծի կանոնադրերի կիրառելիության ուղղությամբ, որի արդյունքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգում կնվազեցվի վարքագծի կանոնների խախտումը:</p>
--	-------	--	--	---

	11004	<p>Ընդլայնել և կատարելագործել պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության օրենսդրական և գործնական հնարավորությունները</p>		<p>Պետական կառավարման համակարգում բարեվարքությունը համարվում է հանրային վստահության և կոռուպցիայի դեմ դիմացկուն հանրային միջավայրի հիմքերից մեկը:</p> <p>Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ (...) մասնակից պետությունները պետք է ապահովի պետական պաշտոններում թեկնածուների և ընտրությունների չափանիշները:</p> <p>Այս տեսանկյունից ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը նախատեսում է Ռազմավարությունն, ի թիվս այլ նպատակների, ուղղված է լինելու հանրային կառավարման համակարգում բարեվարքության ինստիտուցիոնալ մոդելի ներդրմանը:</p> <p>Օրենսդրական մի շարք փոփոխությունների համաձայն արդեն ներդրվել է բարեվարքության համակարգի տարրերից մեկը՝ պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության ստուգման գործընթացը:</p> <p>2020 թվականի մարտի 25-ի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի փոփոխությունների համաձայն՝ Հանձնաժողովն իրականացրել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածուների բարեվարքության ստուգումը, Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուների ստուգումը, Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուների բարեվարքության ստուգումը:</p> <p>Ակնկալվում է կատարելագործել բարեվարքության ստուգման մեթոդաբանությունն ու եզրակացությունները:</p>
--	-------	--	--	---

	11005	<p>Աջակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրանց արդյունքների հիման վրա կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման գործողությունների ծրագրեր մշակմանը</p>		<p>Որպես կոռուպցիայի կանխարգելման համակարգի տարր՝ կարևորվում է նաև պետական կառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրումը:</p> <p>« Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում կարևորվում է կոռուպցիոն ռիսկերի գրոյացմանն ուղղված արդյունավետ կառուցակարգերի ներդրումը, դրանց գործնականումն ապահովումը:</p> <p>Նույն ծրագրով ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում պետք է մշակվեն հակակոռուպցիոն ծրագրեր:</p> <p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին « օրենքի 24-րդ հոդվածի 2.1 մասի 13, 15 կետերի համաձայն՝ Հանձնաժողովը մշակում է կոռուպցիայի կանխարգելման ծրագրեր և դրանք ներկայացնում է Կառավարություն:</p>
--	-------	---	--	--

